

HSBC Բանկն ու ՀՕՖ-ը ամանորյա ուրախություն պարգևեցին Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի երեխաներին

Պատկերացրեք մի երեխա ով ապրում է սահմանամերձ ձյունածածկ գյուղում Տավուշի մարզում: Փոքրիկներն օրերն են հաշվում մինչև Նոր Տարի՝ սպասումով, որ այն Ամանորի հեքիաթ ու խինդ կբերի: Ամանորի շունչը, սակայն, կարող է աննկատ անցնել այն խնդիրների պատճառով, որոնց խոցելի համայնքներն առնչվում են ամեն օր: Ինչևէ, Ամանորի հրաշքը սահմաններ չի ճանաչում, հատկապես, եթե ցանկությանդ մասին պատմում ես մեկին, ով, բնավ, անտարբեր չէ և ուզում է, որ ցանկությունդ իրականանա:

Մինչ անցնող տարին ամփոփում է իր պտույտն ու թևակոխում նոր փուլ, Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանն ու Հայ օգնության ֆոնդը (ՀՕՖ) միավորեցին ջանքերը, որպեսզի օգնեն Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի փոքրիկներին իրականացնել իրենց Ամանորի ցանկությունները: Բանկի մոտ 400 աշխատակիցներ միավորվեցին և գնեցին այն նվերները, որոնք երեխաները խնդրել էին Ձմեռ պապին ուղղված իրենց նամակներում: Նոր Տարուն ընդառաջ բանկի աշխատակիցները մոտ 400 խաղալիք ու այլ նվերներ փոխանցեցին սահմանամերձ ութ համայնքներում (Վերին Ծաղկավան, Չինչին, Նավուր, Տավուշ, Վերին Կարմրաղբյուր, Նորաշեն, Արծվաբերդ, Այգեձոր) ապրող երեխաներին՝ որպես ներդրում իրենց կողմից համայնքների կայուն զարգացման գործում:

Ձմեռ պապը հատուկ նվերներ էր պատրաստել նաև այն փոքրիկների համար, ովքեր գալիք տարի առաջին անգամ ոտք կդնեն դպրոց: Խաղալիքներից բացի, HSBC-ի աշխատակիցները դպրոցական պայուսակներ ու գրենական պիտույքներ նվիրեցին բոլոր 5 տարեկան երեխաներին:

«HSBC-ն իր գործունեության ընթացքում մշտապես ներգրավված է եղել կայուն զարգացմանը նպաստող ծրագրերում: «Խաղալիքների հավաք» նախաձեռնությունը համայնքներին ուղղված աջակցության ծրագրերից մեկն է միայն, որին մեր թիմը պատրաստակամորեն աջակցում է: Հուսով եմ՝ կարողացանք Ամանորին ընդառաջ ուրախացնել Տավուշի մարզում ապրող երեխաներին», -ասում է Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի գլխավոր գործադիր տնօրեն, Փոլ Էդգարը:

«Այս նախաձեռնությունն մեծ խինդ ու ուրախություն պարգևեց երեխաներին, ովքեր այդքան էլ հեշտ կյանքով չեն ապրում: Մենք բոլորս ականատես եղանք, թե նրանք որքան ուրախացան նվերներ ստանալիս, ինչը մեզ ևս ոգևորեց: Համապատասխան բառեր չեմ գտնում արտահայտելու զգացմունքներս ու երախտագիտությունս եմ

փոխացնում HSBC-ի աշխատողներին իրենց մարդկային քայլի համար», - նշում է ՀՕՖ-ի Հայաստանյան մասնաճյուղի փոխտնօրեն Սարգարիտ Փիլիպոսյանը:

«Խնդրեցի ծնողներին՝ ինձ համար նամակ գրեն Ձմեռ պապիկին. «Նոր Տարին է մոտենում, չմոռանաս, քնով չընկնես»: Շատ հավանեցի մեքենաս, հենց այն էր, ինչ ուզել էի», - հինգ տարեկան Արշակ Խաչատրյանը Վերին Ծաղկավան գյուղից նշում է իր ամանորյա նվերի մասին:

2007թ.-ից ի վեր HSBC Հնարավորություն Երիտասարդներին ծրագրի շրջանակում կազմակերպված «Խաղալիքների հավաք» (Toy Drive) նախաձեռնությունը իր դրական փոփոխությունն է բերել երեխաների կյանքում ողջ աշխարհում: Բանկն աշխատում է բարեգործական ծրագրեր իրականացնող գործընկեր կազմակերպությունների հետ խոցելի համայնքներում բնակվող երեխաներին խաղալիքներ նվիրելու և համայնքների կայուն զարգացմանը նպաստելու համար: Ամեն տարի՝ դեկտեմբերին, աշխատակիցները խաղալիքներ են գնում և հավաքում HSBC-ի գրասենյակներում և դեկտեմբերի 25-ի նախօրեին առաքում դրանք տեղի գործընկեր բարեգործական կազմակերպություններին:

Ծրագրի շրջանակում բանկը վերջին երեք տարիներին (2016 – 2018) 9 մլն. ԱՄՆ դոլար է տրամադրել աշխարհում գործող բարեգործական կազմակերպություններին՝ խոցելի խավ հանդիսացող երիտասարդներին աջակցելու համար:

Հարցումների դեպքում դիմել HSBC Հայաստանի հասարակայնության հետ կապերի գծով մենեջեր Արմինե Բաբուրյանին,
Հեռախոս՝ + 374 60 655 345 Էլ. փոստ՝ arminebaburyan@hsbc.com

HSBC Խումբ

HSBC Holdings plc-ն՝ HSBC Խմբի ընկերության գլխամասը, գտնվում է Լոնդոնում: Խումբն իր հաճախորդներին ծառայություններ է տրամադրում իր մոտ 3,900 գրասենյակներից, որոնք գտնվում են 67 երկրներում և տարածաշրջաններում՝ Եվրոպայում, Ասիայում, Հյուսիսային և Լատինական Ամերիկայում, ինչպես նաև Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում: HSBC-ն հանդիսանում է աշխարհի ամենախոշոր և հզոր ֆինանսական կառույցներից մեկը, որի ակտիվները 2017թ.-ի հունիսի 30-ի դրությամբ կազմել են 2,492 միլիարդ ԱՄՆ դոլար:

HSBC-ն Հայաստանում

Բանկը հիմնադրվել է 1996թ.-ին՝ որպես փակ բաժնետիրական ընկերություն «Midland Armenia Bank» ԲԸ անվանումով: 1999թ.-ին վերանվանվել է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի: Բանկը համատեղ ձեռնարկություն է, որի 70%-ը պատկանում է HSBC Խմբին, իսկ 30%-ը՝ արտերկրի հայ գործարարներին: Էյչ-Էս-Բի-Սի Հայաստանը սպասարկում է շուրջ 30,000 հաճախորդի Երևան քաղաքում գտնվող իր 9 գրասենյակների և մոտ 420 աշխատակիցների միջոցով: 2017թ.-ի հունիսի 30-ի դրությամբ բանկի ակտիվները կազմել են 215 միլիարդ ՀՀ դրամ: